PrEP 101

PrEP-ի հիմունքներ

PrEP-ը նշանակում է **Նախաենթարկման կանխարգելում (Pre-Exposure Prophylaxis)**

«Կանխարգելում» բառը նշանակում է կանխել կամ կառավարել մի վարակի կամ հիվանդության տարածումը

PrEP-ը կարող է օգնել կանխարգելել ձեր ՄԻԱՎ ստանալը, եթե դուք ենթարկվում եք վիրուսին

PrEP-ը ՄԻԱՎ-ի կանխարգելման տարբերակ է, որը գործում է ընդունելով

մեկ դեղահատ ամեն օր




Ինչպե՞ս է այն գործում



PrEP-ի մի քանի ուսումնասիրություններում, սեռական հարաբերությունից շատ ավելի ցածր էր — մոտ 99% ցածր — ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նրանց համար, ովքեր դեղերն ընդունել են հետևողականորեն, քան՝ նրանց համար, ովքեր դեղահատը չէին ընդունել

ՄԻԱՎ-ի բուժման համար նշանակված դեղերից մի քանիսը կարող են նաև նշանակվել նրա կանխարգելման համար



Ամեն օր ընդունվելու դեպքում, PrEP-ը կարող է բարձր մակարդակի պաշտպանություն մատուցել ՄԻԱՎ-ի դեմ, բայց միայն պահպանակներն եւ պաշտպանում ուրիշ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (STD) դեմ, ինչպիսին են սիֆիլիսն ու գոնորեան



Անձինք, ովքեր օգտագործում են PrEP-ը, դեղը պետք է ընդունեն ամեն օր և իրենց առողջական խնամքի մատակարարին վերադառնան ամեն 3 ամիսը մեկ՝ հետևման և դեղատոմսերի վերալցավորման համար



ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

PrEP-ի կլինիկական ուսումնասիրություններում ոմանք ունեցել են վաղ կողմնակի ազդեցություններ, ինչպես՝ ստամոքսի խանգարում կամ ախորժակի կորուստ, բայց սրանք եղել են թեթև և սովորաբար անհետացել են առաջին ամսում: Ոմանք ունեցել են նաև թեթև գլխացավ: Ծանր կողմնակի ազդեցություններ չեն նկատվել: Դուք ձեր առողջական խնամքի մատակարարին պետք է հայտնեք այս կամ այլ ախտանիշներ սաստկանալու կամ չանհետանալու դեպքում:

PrEP-ի հասանելիություն

Ի՞նչպես կարող եմ սկսել PrEP-ը

Խոսեք ձեր բժշկի կամ առողջական խնամքի մատակարարի հետ որոշելու՝ արդյո՞ք PrEP-ը հարմար է ձեզ

Եթե դուք և ձեր առողջական խնամքի մատակարարը համաձայնվում եք, որ PrEP-ը կարող է նվազեցնել ձեր ՄԻԱՎ-ով վարակման վտանգը, նա ձեզ կստուգի ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների համար




Ձեր առողջական խնամքի մատակարարն էլ կստուգի ձեզ, պարզելու՝ արդյո՞ք ձեր երիկամները լավ են գործում

Եթե PrEP-ը հարմար ընտրանք է ձեզ համար, ձեր առողջական խնամքի մատակարարը ձեզ մի **դեղատոմս կտա**

Ինչպե՞ս եմ վճարում PrEP-ի համար

PrEP-ը ապահովագրված է ապահովագրական ծրագրերի մեծ մասի կողմից

Կարող եք նաև դիմել ձեր տեղական առողջապահական բաժնին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի սպասարկման կազմակերպությունների՝ հավելյալ տեղեկության համար



Եթե ապահովագրություն չունեք, ձեր առողջական խնամքի մատակարարը կարող է ձեզ ուղղորդել ղեղերի օգնության ծրագրերի, որոնք կարող են վճարել PrEP-ի համար

Start Talking. Stop HIV.

/StartTalkingHIV /StartTalkingHIV

PrEP-ը հարմա՞ր է ինձ

Ես մտածում եմ PrEP-ի մասին՝ ՄԻԱՎ-ը կանխարգելելու համար: Հիմա ի՞նչ:

Կատարեք ձեր հետազոտությունը: Ձեր որոշման օգնելու համար տեղեկություն փնտրեք *cdc.gov/hiv/basics/prep.html*

Ցուցակ կազմեք, թե ինչու կարծում եք, որ PrEP-ը հարմար կլինի ձեզ

Խոսեք ձեր առողջական խնամքի մատակարարի հետ, եթե ունեք հավելյալ հարցեր



Հաճախակի տրվող հարցեր




- Արդյո՞ք PrEP-ը լավ ընտրանք կլինի ինձ համար
- PrEP-ն ինչքա՞ն կնվազեցնի իմ ՄԻԱՎ-ով վարակման վտանգը
- Ուրիշ ի՞նչ կարող եմ անել նվազեցնելու ՄԻԱՎ-ով վարակման իմ վտանգը
- Արդյո՞ք օրական դեղահատը կհարմարվի իմ առօրյային
- Կարո՞ղ եմ օգնություն ստանալ PrEP-ին վճարելու համար
- PrEP-ն ունի՞ արդյոք կողմնակի բարդություններ
- Որքա՞ն հաճախ պետք է ստուգվեմ ՄԻԱՎ-ի և ուրիշ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների համար
- Արդյո՞ք դուք կնշանակեք և կկառավարեք PrEP-ը ինձ համար

Եթե որոշեք, որ PrEP-ը հարմար է ձեզ

Ընդունեք ձեր դեղահատը ամեն օր

Հետևեք ձեր առողջական խնամքի մատակարարի խորհրդին՝ ձեր դեղահատն ընդունելու եղանակի մասին: Սա ՄԻԱՎ-ի կանխարգելման լավագույն պատեհությունը կտա դրան



Ձեր առողջական խնամքի մատակարարին հայտնեք, եթե դժվարանում եք հիշել ձեր դեղն ընդունելը կամ ցանկանում եք դադարեցնել PrEP-ը

PN 222331



Իրազեկ եղեք:
Ձեր առողջության
կարևոր մասն է:

ՅՆՍԱՀՈՒՅԹԻ ԺԴ ԺԱՄԱՆ

Start Talking. Stop HIV.

/StartTalkingHIV
/StartTalkingHIV

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՔ PrEP-Ի ՀԱՄԱՐ

PrEP?



LET'S STOP HIV TOGETHER

Իմացեք ավելին՝ այցելելով cdc.gov/StartTalkingHIV կայքը